

## Արձանագրություն N 2/143

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2015թ-ի  
մարտի 6 -ի նիստի

### Օրակարգ

1. “Հայաստանի եվրասիական հեռանկարներ. Տարածաշրջանային և գլոբալ մարտահրավերներ” միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուն հրատարակության երաշխավորելու հարցը /զեկ.՝ դոց. Խ. Գալստյան/:
2. Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մասին գրքույկը հրատարակության երաշխավորելու հարցը /զեկ. դոց. Խ. Գալստյան/:
3. Աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ դոց. Խ. Գալստյան/:
4. Դոցենտի կոչման համար ՀՀ ԲՈՀ-ի սահմանված կարգով մրցույթին մասնակցության երաշխավորության հարցը /զեկ.՝ դոց. Խ. Գալստյան/:
5. Ընթացիկ հարցեր. ա/ Օտար լեզվի դասավանդման արդի խնդիրներ միջբուհական գիտաժողովի ծրագիրն ու թեզիսները տպագրության երաշխավորելու հարցը:

### Խորհուրդը որոշեց.

1. Հրատարակության երաշխավորել.  
ա/ “Հայաստանի եվրասիական հեռանկարներ. Տարածաշրջանային և գլոբալ մարտահրավերներ” միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուն:  
բ/ ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի մասին գրքույկը:  
գ/ Պատմ. գիտ. դոկտոր Արմենակ Մանուկյանի ներկայացրած “Քաղաքական ուսմունքները նորագույն ժամանակներում” ուսումնական ձեռնարկը: Դիմել ԵՊՀ գիտական խորհրդին՝ միջնորդելու ՀՀ ԿԳՆ-ին Ա. Մանուկյանի աշխատությունը որպես ուսումնական ձեռնարկ երաշխավորելու համար:  
դ/ “Օտար լեզվի դասավանդման արդի խնդիրներ” միջբուհական գիտաժողովի ծրագիրն ու թեզիսները երաշխավորել տպագրության:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.  
ԵՊՀ Քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ Արեն Առաքելյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել “Մարդու իրավունքների համակարգի գաղափարաքաղաքական իմաստավորման հիմնախնդիրները (Հայաստանի Հանրապետության օրինակով)”, ԻԳ.00.01 ”Քաղաքական գիտության պատմություն և տեսություն”

մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գիտական ղեկավար հաստատել քաղ. գիտ. դոկտոր Ա. Ենգոյանին:

3. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ Մենուա Սողոմոնյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի քվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 21 անդամներից քվեարկությանը մասնակցել են 17-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

**Սողոմոնյան Մենուա – 17 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:**

*Խորհրդի նախագահ, պրոֆ.*

*Գ. Պետրոսյան*

*Խորհրդի քարտուղար, դոց.*

*Խ. Գալստյան*